ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/70

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ Ա/Ձ Գրիգոր Այվազյանի լիազորված ներկայացուցիչ՝

Խ. Այվազյանի (լիազորագիր տրված՝ 06.04.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.03.2020թ. թիվ 26/26-1/4767-2020 գրությամբ Ա/Ձ Գրիգոր Այվազյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 27.03.2020թ. թիվ 1/18-2/17642-2020 գրության հիման վրա, 31.03.2020թ. թիվ 26/26-1/4767-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Գրիգոր Այվազյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Գրիգոր Այվազյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Ա/Ձ Գրիգոր Այվազյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊԵԿ կարիքների համար «Ֆաքսիմիլային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Գրիգոր Այվազյանը:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (հետայսու նաև՝ Հանձնաժողով) 02.03.2020թ. թիվ 2 արձանագրության՝ ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Գրիգոր Այվազյանը:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է կայացրել անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

12.03.2020թ. Հանձնաժողովի կողմից Ա/Ձ Գրիգոր Այվազյանի էլ. փոստի հասցեին է ուղարկվել պայմանագրի նախագիծը, որտեղ որպես Պայմանագրի Կատարող կողմ նշվել է Ա/Ձ Գրիգոր Շահբազյան:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 23-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը որպես ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերում որակելու համար հաշվի է առնվում կնքվելիք պայմանագրի գնի մեջ դրանցից որևէ մեկի մեծ տեսակարար կշիռ ունենալու հանգամանքը, բացառությամբ շինարարական աշխատանքների:

Մասնակիցը նշել է, որ տվյալ դեպքում «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը համարվում է ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթ, հետևաբար Ա/Ձ Գրիգոր Այվազյանը գնային առաջարկ է ներկայացրել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 5.2 բ) ենթակետի համաձայն, այն է՝ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում, մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով նույն հրավերով սահմանված ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գների հանրագումարը՝ նկատի ունենալով, որ

կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Ուստի, հիմք ընդունելով վերը նշվածը, գնային առաջարկ է ներկայացվում միավոր գների հանրագումարով, որից հետո առաջին տեղ զբաղեցնելուց հետո պատվիրատուն առաջարկում է պայմանագիր կնքել ծառայությունների մատուցման համար նախատեսված առավելագույն գնով, ընդ որում՝ վճարումները կատարվում են՝ կիրառելով վերը նշված բանաձևը:

Մասնակիցը հայտնել է, որ 12.03.2020թ. Հանձնաժողովի կողմից xachagir@mail.ru հասցեով էլ. փոստին է ուղարկվել պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույնով ծանուցում ենք, որ N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2020թ. թիվ 2 որոշմամբ Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն ճանաչվել է որպես ընտրված մասնակից:

Հիմք ընդունելով վերոգրյալը, կից Ձեզ ենք ուղարկում N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005 ծածկագրով պայմանագրի նախագիծը, որը ընկերության հետ կարող է կնքվել ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով՝ պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում ներկայացնելու դեպքում:

Խնդրում ենք նշված հրավերով սահմանված ժամկետներում ներկայացնել պայմանագրի ապահովումը, վճարման պահանջագիրը, որակավորման ապահովումը, վճարման պահանջագիրը և Ձեր կողմից ստորագրված պայմանագրի օրինակները՝ ուղղեկցող գրությամբ, կամ Ձեր կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները»:

Մասնակցը նշել է, որ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005» ծածկագրով պայմանագրի նախագծի ուսումնասիրության արդյունքում նկատել է, որ պայմանագրի առավելագույն գին է ներկայացվել Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից առաջարկած գինը, որը հանդիսանում է

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005» ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեխնիկական բնութագրի միավոր գների հանրագումարը:

Միաժամանակ Մասնակիցը նշել է, որ եղել է նաև հեռախոսազրույց, որի ընթացքում Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացվել է, որ որպես Պայմանագրի Կատարող կողմ նշվել է Ա/Ձ Գրիգոր Շահբազյան:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/70 ընթացակարգի շրջանակներում 06.04.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.03.2020թ. թիվ 1/18-2/17642-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից չի ներկայացվել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005» ծածկագրով պայմանագրի նախագծի իրենց կողմից ստորագրված օրինակը: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի՝ Ա/Ձ Գրիգոր Այվազյանը զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/70 ընթացակարգի շրջանակներում 06.04.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/70 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/70 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 21.02.2020թ. թիվ 1 արձանագրությամբ հաստատված հրավերի տեքստում սահմանված է հետևյալը.

սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում, մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով սույն հրավերով սահմանված ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գների հանրագումարը, նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Գրիգոր Այվազյանը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ որոշում է կայացվել ընտրված մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ Ա/Ձ Գրիգոր Այվազյանին:

4. Նույն արձանագրությամբ որոշում է կայացվել անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, այն հիմքով, որ վերջինս «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005» ծածկագրով պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.03.2020թ. թիվ 26/26-1/4767-2020 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 27.03.2020թ. թիվ 1/18-2/17642-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից ներկայացված դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետի համաձայն՝ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում, հրավերով սահմանվում է նաև ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը**, իսկ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի**

<u>առնելով այդ առավելագույն գների հանրագումարը</u>՝ նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

1) ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

2) **<u>ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.</u>**

3) ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

4) Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

5) Ք-ն մատուցված ծառայության քանակն է.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 5.2 կետը սահմանում է, որ Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում՝

ա) մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման.

բ) ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում, <u>մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով սույն հրավերով սահմանված ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գների հանրագումարը,</u> նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

<u>ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.</u>

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է

Քն մատուցված ծառայության քանակն է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ որոշում է կայացվել ընտրված մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ Ա/Ձ Գրիգոր Այվազյանին:

Նույն արձանագրությամբ որոշում է կայացվել անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, այն հիմքով, որ վերջինս «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005» ծածկագրով պայմանագիրը:

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005» ծածկագրով պայմանագրի նախագծի ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ որպես պայմանագրի գին է սահմանվել Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից Ընթացակարգի հրավերի համաձայն առաջարկած **<u>ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գների հանրագումարը՝ 25 900 ՀՀ դրամը,</u>** ինչը հակասում է **<u>Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետով և Ընթացակարգի հրավերի 5.2 կետի բ) ենթակետով սահմանված պահանջներին</u>**: Ելնելով Մասնակցին ներկայացված պայմանագրի նախագծով սահմանված գնի նման կերպ նախատեսելու տրամաբանությունից՝ Ընթացակարգի հրավերով սահմանված բանաձևի անհրաժեշտությունը չէր առաջանա:

Այսպիով՝ Մասնակիցը չի ստորագրել Պատվիրատուի կողմից ուղարկված N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/005 ծածկագրով պայմանագիրը՝ նախագծով 25 900 ՀՀ դրամ գին սահմանելու պատճառով: Ուստի գտնում եմ, որ նման պայմաններում Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից պայմանագրի նախագիծը չստորագրելը չի կարող բավարար հիմք համարվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտման փաստն արձանագրելու և վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.03.2020թ. թիվ 26/26-1/4767-2020 գրությամբ Ա/Ձ Գրիգոր Այվազյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**